ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

12 հունիսի 2015թ. թիվ 383-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 667-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. մայիսի 21-ի N 527-Ն որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 2-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 2-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 667-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը.

1. Հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ <<դ>>, <<ե>> և <<զ>> պարբերություններով:

<<դ. էլեկտրոնային ձևով ապրանքների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 2.4-ի,

ե. էլեկտրոնային ձևով աշխատանքների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 2.5-ի,

զ. էլեկտրոնային ձևով ծառայությունների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 2.6-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ.Խաչատրյան

ՖՆ 001873